ՀԱՅԱՍՏԱՆ ԵՒ ԱՐՏԱՔԻՆ ՀԱՐԵՒԱՆՆԵՐ

(ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ)

Գրեց՝ ԱՐՏ. ԱԲԵՂԵԱՆ

I

ՀԱՅԱՍՏԱՆԻ քաղաքական ճակատագիրը այսօր չա՛տ աւելի մեծ չափերով է կապուած Անդրկովկասի՛ հետ, քան երբեւէ՝ մեր պատմութեան մէջ։ Չի եղել եւ ո՛չ մի շրջան մեր բազմադարեան անցեալում, որ հայ հայրենիքի ¾-ը խպառ թափուր դարձած լինի իր ընիկ տարրից, ինչպէս այժմ է։ Բայց դժուար է ասել նաեւ, թէ հայութիւնը երբեւէ, թէկուզ մէ՛կ մասով եւ իր հայրենի աշխարհի մի փոքրիկ կտորի վրայ միայն, ա՛յնչափ ինքնամփոփ ապրել, ազգագրօրէն ա՛յնպէս միատարր զանգուած կազմել, ինչպէս այսօրուան Հայաստանում է։

«Հայաստանի Հանրապետութիւնը» սոսկ աշխարհագրական անուն չէ, այլ՝ գերազանցօրէն ազգագրական։ Այո՛, կայ ժողովուրդի մղած ազատագրական պայքարը, որ պատճառել է անասելի զոհեր, եւ սակայն միւս կողմից նա իրական հայրենիքի գրաւումը դարձրել է փաստ։ Թող դա լինի նեղ, անճուկ սահմաններում, բայց եւ այնպէս իրականութիւն է։ Եւ ո՛չ մի ազգ աշխարհիս երեսին ատակ չի եղել՝ մէկ սերունդի օրով ու ձեռքով իրագործելու իր խոչալը։

Բոլոր պարագաներում՝ Հայաստանը, որպէս հաւաքական–քաղաքական գաղափար, Անդրկովկասի մէջ է ամփոփուած այսօր։ Հայ ժողովուրդն եւս, որպէս կրողը ազգային–քաղաքական խոչալների, անդրկովկասեան ժողովուրդ է ներկայիս, մինչ երէկ նա նոյնչափ եւ առաւելապէս փոքր–ասիական ժողովուրդների շարքին էր պատկանում։ Աչքի անցկացնենք Փոքր Ասիայի եւ Անդրկովկասի ազգագրական – քարտէսները նախապատերազմեան շրջանում եւ ներկայիս, ու համեմատենք իրար հետ։ Այսօր՝ ո՛չ միայն Թրքահայաստանն է թափուր հայութիւնից, այլ եւ՝ Կարսի նահանգը, այլ եւ Սուրմալուն ու Նախիջեւանը։

Փոխուած պայմանները թելադրում են նաեւ նոր քաղաքականութիւն։ Վերջինիս միակ ելակէտը, ներկայիս, իրական Հայաստանն է, այսօրուան տարածութեամբ։ Հարկաւ, եւ ո՛չ մէկ սահման յաւիտենական չէ, բայց միայն եւ միայն այդ սահմանների ներսում է, որ մշակուել եւ զարգանալ կարող է որեւէ հեռաւոր ծրագիր։ Այդ սահմանների մէջ ապրող ժողովուրդն է, որ հանդիսանալու է իրագործողը այդ ծրագիրների, յենուած սեփական ուժերի վրայ։

Եթէ ուրեմն Հայաստանը եւ հայութիւնը անդրկովկասեան ազգակ են այսօր, բնականաբար մեր ճակատագիրն էլ կապուած է Անդրկովկասի հետ։ Այդտեղ կատարուող որեւէ փոփոխութիւն անհրաժեշտօրէն եւ անխուսափելիօրէն պիտի ազդէ նաեւ Հայաստանի ու հայ ժողովուրդի ճակատագրի վրայ։ Մեր երկրի բախտը անխզելիօրէն կապուած է անդրկովկասեան երկիրների բախտի հետ։ Ուզենք թէ չուզենք, լաւ է թէ զէշ՝ մենք փոխել չենք կարող այդ իրականութիւնը։ Որով հայ ազգային քաղաքականութեան առաջին խոչ խնդիրներից մէկն է՝ որոնել ու գտնել այն միջոցները, որոնցով հնարաւոր է ընդհանուր լեզու գտնել մեր անմիջական հարեւանների հետ, մեր եւ նրանց շահերը համերաշխեցնել իրար, անդամ առաւելագոյն զոհաբերութիւնների գնով — Խորհրդային թէ ոչ Խորհրդային կարգերի տակ։

Մեր համոզումով՝ Անդրկովկասեան ժողովուրդների իրական եւ ցանկալի միութեան ճամբու վրայ հայ–վրացական համաձայնութիւնը, պիտի լինի առաջին հանգրուանը։ Այդ մասին խօսել ենք արդէն։ Եւ սակայն, այդ չի նշանակում, թէ առաջին հանգրուանը միակն էլ է։ Համերաշխութիւնը եւ համաձայնութիւնը, որպէսզի լինին իրական, թէկուզ արդիւնք ծանր զոհաբերութեանց, պիտի լինին նաեւ